

17. **Յովհ. Փիաղեան** — 1786 ին տպած է Չամբեանի Հայոց Պատմութեան Գ. հատորը, Սաղմա, Թովմա Դեմբացի, Տօմար Կարճառօս, Ասենաբանութիւն (Ներսէս Լամբրոնացի) 1787, բովանդակելով Քսի Համբարձման և Հոգին Սուրբի Գալստեան ճառերը :



18. **Մխիթարեանք Վենետիկ** — Հիմնադիրն է Մխիթար ԱՅԲԱՅ, ծնած Սկզբ 7 Փետր. 1676 ին, Պետրոս և Շահրիստան համետ ամուսին : 1691 ին տեղւոյն Ս. Խաչ վանքը կը մտնէ՝ նոյն տարին տարկաւազութեան աստիճան ստանալով, և փոխան **Մանուկի՝ Մխիթար** անուանակոչուելով : Կանուխէն զարգանալու ընդունակ՝ կ'անցնի անվներ Սեւան (Էջմիածին) և յընթացս իր ուղեւորութեան՝ յարաբերութեան մէջ կը մտնէ լատին կրօնաւորներու հետ որոնք իրենց կը ծանօթացունեն Սուրբապետ և Գարդարիսիւնը : Սակայն անհրապատ պարագաներ խոչընդոտ կ'ըլլան իր որոշումին գործադրութեան, որով կ'ստիպուի դառնալ ծննդավայր՝ ուր վարդապետ կը ձեռնադրուի 20 տարեկանին : Իր քարոզներէն դժգոհողներուն պատճառաւ կու գայ Պոլիս և Ս. Լուսաւորիչ եկեղեցին (Ղալաքիա) կ'սկսի քարոզել : յետոյ Սեւ Ծովու ճամբով կ'ուղեւորի մինչեւ Կարին, ամենուրեք վարդապետելով : Պոլիս դարձին՝ հալածանքը կ'սկսի իրեն դէմ Լուսաւորչական Հայերէ : 1701 ին Բերա կը հաստատուի և համախոհ աշակերտներու հետ սկիզբ կը դնէ իր Մխարանութեան՝ Սեպտ. 8 ին : Հոն է որ (ի բաղն Պեկողլի) **Կրօն. գիրքեր սպիլ կուսայ** ու կ'սկսի տարածել զանոնք, մինչեւ որ օրուան Պատրիարքները — Ղափանցի եփրեմ, ապա Աետիք — բունդ հակառակորդ կը դառնան իրեն : Մխիթար Վրդ. կ'ստիպուի ապաստանիլ Ղալաքիոյ Յիսուսեանց վանքը, յետոյ Բերայի Բարուչիներու մենաստանը : Եղած հետապնդումէն ճարահատ՝ իր աշակերտներուն հետ ծախելով նաւ կը նըս-



Մ Խ Ի Թ Ա Ր Ա Ր Ք Ա Յ Ս Ե Ր Ա Ս Ս Ա Յ Ի

տի ու կը քաշուի Մօռեա (Յունաստան), Մերօնի մէջ կը հաստատուէ իր Մխարանութիւնը 1706 ին : 6 տարի ետք՝ Կղեմէս ԺԱ. «արքայ» տիտղոսը կը շնորհէ իրեն : 1715 ին կը հարկաւորուի հոնկէ դէպ ի Տօմերու քաղաքը մեկնիլ իր աշակերտներուն մեծ մասին հետ, արշաւանքին հետեւանօք բուրք զօրաց որոնք իր մենաստանը կը կործանեն : Վենետիկի մէջ, 1717 Սեպտ. ամսուն, Ծերակոյտին ձրովարտակով իրեն կը շնորհուի «Կարմիր կոզի»՝ Ս. Ղազարն ուր վանք ու ժամ կը կառուցանէ ինք՝ հիւանդանոցի մէջ աւերակներուն վրայ : Կը վախճանի 27 Ապրիլ 1749 ին : — Այդ խաղաղաւետ մրնոյորտին մէջ ապրած իր կեանքի վերջին 31 բեղմնաւոր տարիները նիւթ են լայն ուսումնասիրութեան : Համօրէն Հայերս կոչելու ենք զինք՝ ոչ միայն համանուն Ուխտին, այլ և Հայ գրականութեան վերածնունդեան հիմնադիրը, մեր «երկրորդ Լուսաւորիչ»՝ առանց այլեւայլի : Այդ ուսումնական մենաստանէն էր որ ընծիւղեցին ա-